



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«03» 02 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 012 - 25

Նախաձեռնող՝

«Գրեյ Բազալտ» ՍՊԸ

ք. Մարալիկ Մաղաթյան փողոց 17 շ., 7/8 բն.

Գործունեությունը՝

Մարալիկի պիրոքսենային անդեզիտի հանքավայրի
արդյունահանում

Շիրակի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 012 - 25

« 03 » փետրվարի 2025թ.

«Գրեյ Բազալտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Շիրակի մարզի Մարալիկի պիրոքսենային անդեզիտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Գրեյ Բազալտ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /«Ա» կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ, Քարաբերդ բնակավայր

Ներածական մաս. Շիրակի մարզի Մարալիկի պիրոքսենային անդեզիտի հանքավայրի տեղամասում նախատեսվում է իրականացնել արդյունահանման աշխատանքներ:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի «թ» ենթակետի, դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս. Մարալիկի պիրոքսենային անդեզիտների հանքավայրի հայցվող տեղամասը գտնվում են ՀՀ Շիրակի մարզի Անի խոշորացված բնակավայրի Քարաբերդ բնակավայրից մոտ 0.4 կմ (ըստ հաշվետվության 35-րդ էջի սխեմայի ներկայացված տեղեկատվության համաձայն՝ 396 մ) հարավ-հարավ-արևմուտք, Ձիթահնքով բնակավայրից 3.3 կմ, Լանջիկ բնակավայրից 3.3 կմ և Երևան-Գյումրի ավտոմայրուղուց շուրջ 2.3 կմ հեռավորությունների վրա: Շիրակի մարզի Մարալիկի պիրոքսենային անդեզիտի հանքավայրի տեղամասի տարածքը զբաղեցնում է շուրջ 2,24 հա մակերես:

Հանքավայրի պաշարները պաշարները հաստատվել են 26.02.1982 թ-ին Հայկական ՍՍՀ ՊՏՀ-ի կողմից թիվ 257 արձանագրությամբ՝ 712.2 հազ. խմ քանակով, ըստ B կարգի: Պիտանի բլոկների ելքը կազմում է 21.3 %: «Գրեյ բազալտ» ՍՊԸ-ն նախատեսում է հանքավայրի տեղամասը մշակել բաց լեռնային աշխատանքներով, միակողանի ընդլայնական ընթացքաշերտով մշակման համակարգով, մակաբացման ապարները ներքին լցակույտեր տեղափոխելով: Բազալտների ծավալը հայցվող տեղամասի եզրագծում կազմում է 461.8 հազ. խմ ըստ B կարգի, մակաբացման ապարների ծավալը՝ 54456.0 խմ, այդ թվում հողաբուսական շերտը՝ 6720.0 խմ: Նշված պաշարները կապահովեն բացահանքի աշխատանքը 20 տարիների ընթացքում: Երեսապատման սալերի արտադրության բլոկների արդյունահանումը նախատեսվում է իրականացնել հորատասեպային եղանակով:



Նախագծված բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը՝ ռավելագույն երկարությունը՝ 260.0 մ, առավելագույն լայնությունը՝ 195.0 մ, բացահանքային դաշտի օտարման մակերեսը՝ 2.24 հա, անդեզիտների հաշվեկշռային պաշարի ծավալը՝ 461800.0 խմ, անդեզիտների արդյունահանվող ծավալը՝ 352815.0 խմ, հանքաստիճանի բարձրությունը՝ 5 մ, մարված հանքաստիճանի թեքման անկյունը՝ 75 աստիճան, մակաբացման ապարների ծավալը՝ 54456.0 խմ: Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ անդեզիտների մարվող զանգվածի կազմում է 23090.0 խմ: Հաշվի առելով նախագծային կորուստները, բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ անդեզիտի արդյունահանվող զանգվածի կկազմի՝ 17641.0 խմ: Հանքարդյունահանման աշխատանքները բացահանքում նախատեսվում է կատարել շուրջ տարի, 5-օրյա աշխատանքային շաբաթով: Աշխատանքային օրերի քանակը տարում ընդունված է 260 օր:

Նախագծվող բացահանքի արևմտյան հատվածով անցնող ավտոճանապարհից, դեպի բացահանքի 1965.0 մ բարձրության նիշը նախատեսվում է մուտքային ավտոճանապարհի անցում, որից կատարվում է 1965.0 մ, 1960.0 մ և 1955.0 մ աշխատանքային հորիզոնների բացումը՝ բացող կիսախրամների անցումով: Բացահանքի 1950.0 մ և հաջորդ հանքաստիճանների բացումը կատարվում է բացահանքի հարավ, հարավ-արևելյան հատվածում՝ կառուցված մուտքային ավտոճանապարհից դեպի բացահանքի 1950.0 մ հորիզոն կառուցվող 50.0 մ երկարության, 6.0 մ լայնության ավտոճանապարհից: Խրամների լայնությունը հիմքի մասում ընդունված է 14.0 մ, բարձրությունը՝ 5 մ: Աշխատանքային հորիզոնի բացման ընթացքում օգտագործվում է բուլդոզեր, էքսկավատոր, ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրը՝ հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել միակողմանի ընդլայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով:

Բացահանքի լցակույտային ապարները ներկայացված են մակաբացման ապարներով՝ 54456.0 խմ, այդ թվում հողաբուսական շերտը՝ 6720.0 խմ ծավալով՝ նախատեսվում է պահեստավորել արտաքին լցակույտերում, տեղադրված բացահանքի եզրագծից դուրս, նրա արևելյան հատվածում: Բացահանքի եզրագծում առկա հողաբուսական շերտը նույնպես տեղափոխվում է դեպի լցակույտ, և առանձին պահպանվում ՀՀ կառավարության որոշումների պահանջներին համապատասխան: Մակաբացման ապարների լցակույտի հիմքի զբաղեցրած մակերեսը կազմում է 0.6 հա, բարձրությունը՝ 10 մ, շեպի թեքման անկյունը՝ 30-350, հողաբուսական շերտի լցակույտի զբաղեցրած տարածքը՝ 0.13 հա, բարձրությունը՝ 5 մ:

Շահագործման 18-րդ տարուց, արդյունահանման աշխատանքներին զուգահեռ, երբ բացահանքի 1935 մ հանքաստիճանում առաջանում են մշակված ազատ տարածքներ, լցակույտային ապարները սկսվում են պահեստավորվել բացահանքի մշակված տարածքներում: Դեպի բացահանքի մշակված տարածքներ են տեղափոխվելու նաև արտաքին լցակույտում կուտակված մակաբացման ապարները, ներառյալ հողաբուսական շերտը: Բացահանքի մշակված տարածքներում լցակույտային ապարները տեղադրվում են հետևյալ կերպ՝ բուլդոզերի օգնությամբ սկզբում փռվում են մակաբացման ապարները, որից հետո, դրանց վրա, հողաբուսական շերտի ապարները: Վերջնական ռեկուլտիվացիոն աշխատանքները կկատարվեն արդյունահանման աշխատանքների ավարտին: Ռեկուլտիվացիոն տարածքի մակերեսը կազմում է 3.60 հա:

Տարածքի ծայրակետերի կոորդինատները՝ ARMWGS-84 միասնական համակարգով հետևյալն են՝



1. X=4490000.90 Y=8401805.28
2. X=4490121.78 Y=8401777.13
3. X=4490112.41 Y=8401714.93
4. X=4490247.00 Y=8401750.00
5. X=4490246.00 Y=8401756.00
6. X=4490250.00 Y=8401759.00
7. X=4490232.00 Y=8401786.50
8. X= 4490112.00 Y= 8401880.00
9. X= 4490105.00 Y= 8401873.00
10. X= 4490098.00 Y= 8401872.00
11. X= 4490089.00 Y= 8401880.00
12. X= 4490081.00 Y= 8401882.00
13. X= 4490079.00 Y= 8401887.00
14. X= 4490083.00 Y= 8401900.00
15. X= 4490068.00 Y= 8401910.00
16. X= 4490052.00 Y= 8401918.00
17. X= 4490042.00 Y= 8401913.00

Համաձայն հաշվետվության տեղեկատվության՝ ուսումնասիրվող և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը: Ուսումնասիրվող տարածքի մոտակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, տարածքն անմիջական սահմաններ չունի ԲՀՊՏ-ների հետ:

Բացահանքի ջրամատակարարումը տեխնիկական ջրով կատարվելու է բարձման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվելու է ջրցան-լվացող ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ջրի ցիստեռնով: Ընդերքօգտագործման իրավունքի փաթեթի ձևավորումից հետո ընկերությունը լիազոր մարմնի հետ կկնքի ջրառի պայմանագիր, որտեղ կնշվեն ջրառի պայմանները: Որպես ջրառի վայրի նախնական տարբերակ հնարավոր է նախատեսել Քարաբերդ բնակավայրը:

Բացահանքի և լցակույտերի տարածքներում հատուկ ջրհեռացնող միջոցառումներ չեն նախատեսվում: Գրունտային ջրերը բացահանքի տարածքում բացակայում են, իսկ անձրևաջրերը կհեռանան ներծծման և բնական գոլորշիացման եղանակով: Համաձայն հանքավայրի ջրաերկրաբանական պայմանների՝ ստորգետնյա ջրերը հանքավայրի տարածքում բացակայում են:

Բացահանքի եզրագծում առկա հողաբուսական շերտը՝ 6720.0 խմ ծավալով տեղափոխվելու է դեպի արտաքին լցակույտ, տեղադրված բացահանքի արևմտյան մասում և պահպանվելու է ՀՀ կառավարության որոշումների պահանջներին համապատասխան: Ի կատարումն ՀՀ կառավարության 02.11.2017թ-ի թիվ 1404-Ն որոշման պահանջի, այն է՝ հողի բերրի շերտը պահել 20 տարուց ոչ ավել, շահագործման 18-րդ տարուց, երբ բացահանքի տարածքում հնարավոր կլինի կատարել ռեկուլտիվացիոն աշխատանքներ, կուտակված հողային շերտը կսկսվի օգտագործվել բացահանքում կատարվող ռեկուլտիվացիոն աշխատանքների համար:



Հայցվող տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու, այստեղ չկան գործող արդյունաբերական և խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններ, համապատասխանաբար օդային ավազանը չի կրում անտրոպոգեն զգալի ազդեցություն: Հանքավայրի տարածքում մշտական դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան: Ըստ հաշվետվության տեղեկատվության բոլոր նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների առավելագույն արժեքները, հաշվի առնելով նաև ֆոնային ցուցանիշները, չեն գերազանցում սահմանված ՍԹԿ-ը:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները՝ փոշիացումը նվազեցնելու նպատակով տարվա չոր և շոգ եղանակին կատարել ջրցանում՝ օրը 3 անգամ: Բացահանքում աշխատող տեխնիկայի շարժիչների վառուցքները պետք է լինեն կարգավորված՝ անսարք մեքենաների շահագործումը բացահանքում պետք է արգելվի: Մեքենաների շարժիչների գազերի արտանետման վրա պետք է տեղադրված լինեն կատալիտիկ չեզոքացուցիչներ, ինչն արտանետումը մթնոլորտ թույլ կտա կրճատել գազերի թափոնները պարբերաբար դուրս բերել բացահանքի տարածքից և տեղադրել հատուկ նախատեսված հարթակներում: Արգելվում է արտիրապարակից դուրս խախտել լրացուցիչ տարածքներ, տեղադրել թափոններ և այլն: Հակահրդեհային միջոցառումների կիրառում:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընթացքում հարթեցվելու է բացահանքի հատակը և արտադրական հրապարակի տարածքները: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընդհանուր տարածքը կազմելու է 3,6 հա: Աշխատանքները կատարվելու են էքսկավատոր ավտոինքնաթափ բուլդոզեր համալիրով: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացման համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված հաշվարկները կատարվել են համաձայն ՀՀ կառավարության 18.08.2021թ-ի «ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՑԻՆ ԱՐԺԲՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1352-Ն որոշման պահանջների համաձայն: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա, ինչի շրջանակներում բացահանքի և արտադրական հրապարակի ռեկուլտիվացված տարածքները պարարտացվելու են գրանուլացված կենսահումուսով, համալիր օրգանահանքային պարարտանյութերով: Լեռնային աշխատանքների հետևանքով խախտված հողերի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի համար անհրաժեշտ ծախսերը կազմելու են՝ 1225.6 հազար ՀՀ դրամ, կենսաբանական վերակուլտիվացման համար՝ 720.0 հազար ՀՀ դրամ, ընդհանուր ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն՝ 1945.6 հազար ՀՀ դրամ: Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգի իրականացումը ու դրա արդյունքների տրամադրումը լիազոր մարմնին իրականացվելու է կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջների համաձայն: Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 200.0 հազար ՀՀ դրամ:

Պարճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության փուլերում Շիրակի մարզի Քարաբերդ բնակավայրում անցկացված հանրային քննարկումների ժամանակ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: 4-րդ հանրային լսման ընթացքում մասնակիցների կողմից հարց



է բարձրացվել հայցվող տարածքից ամենամոտ բնակելի տան գտնվելու հեռավորության վերաբերյալ, որին ի պատասխան ՍՊԸ-ի ներկայացուցիչները հավաստել են, որ բնակելի տները գտնվում են բավականին հեռու և սանիտարա-պաշտպանիչ գոտին պահպանված է՝ համաձայն գործող սանիտարական նորմերի, ինչի վերաբերյալ ներկայացված է ՇՄԱԳ-ում և քարտեզագրական նյութերում: Ընկերության ներկայացուցիչները նշել են, որ մոտակա բնակելի տարածքը գտնվում է 396,0 մ հեռավորության վրա, իսկ ոչ մետաղական հանքավայրերի համար սանիտարապաշտպանիչ գոտու մեծությունը կազմում է 300,0 մ, ուստի հատուկ միջոցառումներ չեն նախատեսվել:

Փորձաքննական հիմնավորումներ

Փորձաքննության ընթացքում պարզվել է, որ Քարաբերդ բնակավայրի մոտակա բնակելի տարածքները գտնվում են 300 մ-ից պակաս հեռավորության վրա և «Գրեյ Բազալտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեղեկությունները բնակավայրերի և հայցվող տեղամասի գտնվելու հեռավորությունների վերաբերյալ հավաստի չեն, ՇՄԱԳ-ում և քարտեզագրական նյութերում սխալ են ներկայացվել: Նման պայմաններում խախտվում է քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի թիվ 06 հրամանի հավելվածով հաստատված սանիտարապաշտպանիչ գոտու չափերին ներկայացվող պահանջը: Նախատեսվող գործունեության իրականացումը և բնակավայրերին մոտ գտնվելու հանգամանքը հանքավայրի շահագործման ընթացքում կարող են առաջացնել ռիսկեր մոտակա բնակավայրի բնակիչների առողջության և հարակից տարածքների շրջակա միջավայրի բաղադրիչների վրա:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ


Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները և առաջնորդվելով Օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով (21.06.2014թ. ՀՕ-110-Ն)՝ «Գրեյ Բազալտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Շիրակի մարզի Մարալիկի պիոբստենային անդեզիտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Վարդան Հարությունյան